

3537

Ս Տ Ա Լ Ի Ն

ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ—
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐ

3K33

7-93

ԻՓԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՊԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1940

3K33

այր

27 JUN 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

4-93

20 NOV 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ— ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Հառ տնտեսավարների խորհրդակցությամբ
1931 թ. հունիսի 23-ին



2827

40

И. СТАЛИН
НОВАЯ ОБСТАНОВКА—НОВЫЕ
ЗАДАЧИ ХОЗЯЙСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА

Государственное издательство политической литературы
ЕРЕВАН ● 1940

Ընկերները: Սորհրդակցության նյութերից երևում է, որ մեր արդյունաբերությունը սլանների կատարման տեսակետից բավական խայտարեղ աղատներ է ներկայացնում: Կան արդյունաբերության ճյուղեր, որոնք անցած հինգ ամսում արտադրանքի 40—50% աճ են տվել անցյալ տարվա համեմատությամբ: Կան ճյուղեր, որոնք 20—30%-ից ավելի աճ չեն տվել: Վերջապես, կան արդյունաբերության առանձին ճյուղեր, որոնք նվազագույն աճ են տվել—եղածչեղած 6—10%, դուցե և դրանից էլ պակաս: Վերջինների թվին պետք է դասել ածխարդյունաբերությունը և սև մետաղադործությունը: Պատկերը, ինչպես տեսնում եք, խայտարեղ է:

Ինչո՞վ բացատրել այս խայտարեղությունը: Ո՞րտեղ է արդյունաբերության ճյուղերից միջանիսի հետ մնալու պատճառը: Ո՞րտեղ է այն բանի պատճառը, որ արդյունաբերության ճյուղերից միջանիսը տալիս են ընդամենը միայն 20—25% աճ, իսկ ածխարդյունաբերությունն ու սև մետաղադործությունն ավելի ևս փոքր աճ են տալիս, քարշ են դալիս մյուս ճյուղերի պոչից:

Պատճառն այն է, որ վերջին ժամանակներս արդյունաբերության զարգացման պայմաններն արմատապես փոխվել են, ստեղծվել է նոր իրադրություն, որը պահանջում է դեկլարման նոր եղանակներ, իսկ մեր անտեսալարներից ոմանք, փոխանակ աշխատանքի եղանակները փոխելու, դեռևս չարունակում են հին ձևով աշխատել: Հետևաբար,

բանն այն է, որ արդյունաբերութեան զարգացման նոր պայմանները պահանջում են նոր ձևի աշխատանք, իսկ մեր տնտեսավարներից ոմանք այս բանը չեն հասկանում և չեն տեսնում այն, որ այժմ պետք է նոր ձևով ղեկավարել:

Այս է մեր արդյունաբերութեան ճյուղերից մի քանիսի հետ մշակու պատճառը:

Մեր արդյունաբերութեան զարգացման այդ ի՞նչ նոր պայմաններ են: Ո՞րտեղից ծագեցին նրանք:

Նրանք, այդ նոր պայմանները, առնվազն վեց են:

Քննարկենք այդ պայմանները:

I

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԸ

Ամենից առաջ՝ խոսքը վերաբերում է ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովելուն: Առաջներում բանվորները սովորաբար իրենք էին գնում գործարանները, Փաբլիկաները, ասել է՝ թե այս գործում մի ինչ-որ ինքնահոս կար: Իսկ այս ինքնահոսը բղխում էր նրանից, որ կար գործադրելություն, կար գյուղում շերտավորում, կար աղքատություն, կար սովի ահ, որը մարդկանց գյուղից քաղաք էր քշում: Հիշո՞ւմ եք «Մուժիկի փախուստը գյուղից քաղաք» Փորմուխան: Ի՞նչն էր ստիպում գյուղացուն գյուղից քաղաք փախչելու: Սովի ահը, գործադրելությունը, այն հանգամանքը, որ գյուղը նրա համար խորթ մայր էր, և նա պատրաստ էր այնտեղից փախչելու թեկուզ գրողի ծոցը, միայն թե որևէ աշխատանք ստանա:

Այսպես կամ համարյա այսպես էր մեղանում գործի վիճակը մոտիկ անցյալում:

Արդյոք կարելի՞ է ասել, թե մենք այժմ իսկը հենց այդպիսի պատկեր ունենք: Ո՛չ, չի կարելի ասել այդ: Ընդհակառակը, այժմ իրադրությունն արմատապես փոխվել է: Եվ հենց այն պատճառով, որ իրադրությունը փոխվել է, մեղանում այլևս բանվորական ուժի ինքնահոս չկա: Իսկապես, ի՞նչն է փոխվել այս ժամանակի ընթացքում: Նախ՝

մենք վերացրինք գործադրելությունը, — ասել է՝ մենք ոչ ընդացրինք այն ուժը, որը ճնշում էր «աշխատանքի շուկայի» վրա: Երկրորդ, մենք արմատապես խարխեցրինք շերտավորումը գյուղում, — ասել է՝ հաղթահարեցինք հենց այն մասսայական աղքատությունը, որը գյուղացուն գյուղից քաղաք էր քշում: Վերջապես, մենք գյուղին մատակարարեցինք տանյալ-հաղարավոր տրակտորներ ու գյուղատնտեսական մեքենաներ, ջախջախեցինք կուլակին, կոլխոզներ կադմակերպեցինք և գյուղացիներին մարդավարի ապրելու և աշխատելու հնարավորություն տվինք: Գյուղն այժմ այլևս չի կարելի գյուղացու համար խորթ մայր անվանել: Եվ հենց այն պատճառով, որ գյուղն այլևս չի կարելի խորթ մայր անվանել, գյուղացին սկսեց նստակյաց դառնալ գյուղում, և մենք այլևս չունենք ո՛չ «մուժիկի փախուստ գյուղից քաղաք», ո՛չ էլ բանվորական ուժի ինքնահոս:

Դուք տեսնում եք, որ մենք այժմ ունենք բոլորովին նոր իրադրություն և ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովելու նոր պայմաններ:

Իսկ սրանից ի՞նչ է բղխում:

Սրանից, նախ, այն է բղխում, որ այլևս չի կարելի հույս դնել բանվորական ուժի ինքնահոսի վրա: Նշանակում է՝ իքնահոսի «քաղաքականությունից» պետք է անցնել արդյունաբերութեան համար կազմակերպված եղանակով բանվորներ հավաքագրելու քաղաքականությանը: Բայց դրա համար դոյություն ունի միայն մի ճանապարհ — տնտեսական կազմակերպությունների կողմից կոլխոզների ու կոլխոզիկների հետ պայմանագրեր կնքելու ճանապարհը: Դուք գիտեք, որ արդեն այս ճանապարհն են ոտք դրել մի քանի տնտեսական կազմակերպություններ ու կոլխոզներ, ըստվորում՝ փորձը ցույց տվեց, որ պայմանագրերի պրակտիկան լուրջ հաջողություններ է տալիս ինչպես կոլխոզների, այնպես էլ արդյունաբերական ձեռնարկությունների համար:

Երկրորդ, սրանից այն է բղխում, որ անհավաղ պետք է

անցնել աշխատանքի ամենից ավելի ծանր պրոցեսների մե-
խանիզմից խախտվելով՝ ամբողջ թափով ծավալելով այս դործը
(անստառային արդյունաբերությունը, շինարարական դործը,
ածխարդյունաբերությունը, - բեռնում - բեռնաթափումը,
տրանսպորտը, սև մետաղադործությունը և այլն)։ Իհարկե,
այս չի նշանակում, որ, իբր թե, պետք է անուշադրություն
մատենել ձեռքի աշխատանքը։ Ընդհակառակը, ձեռքի աշխա-
տանքն արտադրության մեջ դեռ երկար ժամանակ լրջա-
գույն դեր է խաղալու։ Բայց այս նշանակում է, որ աշխա-
տանքի պրոցեսների մեխանիզացիան մեզ համար այն նոր
ու վնասակար ուժն է, առանց որի անկարելի է ղեկմանալ
ո՛չ մեր տեմպերին, ո՛չ էլ արտադրության նոր մասշտաբ-
ներին։

Մեղադրում դեռ քիչ չեն այն տնտեսավարները, որոնք
«չեն համարում» ո՛չ մեխանիզացիային, ո՛չ էլ կոլ-
խոզների հետ կնքած պայմանագրերին։ Այդ հենց այն
տնտեսավարներն են, որոնք չեն հասկանում նոր իրադրու-
թյունը, չեն ուզում նոր ձևով աշխատել և խն են քաջում
«վաղեմի լավ ժամանակների» համար, երբ բանվորական
ուժն «ինքն էր դալիս» ձեռնարկությունները։ Ինչ ասել
կուզի, որ այդպիսի տնտեսավարները, ինչպես երկինքը եր-
կրից՝ հեռու են տնտեսական շինարարության այն նոր խըն-
դիրներից, ուր մեր առջևն է դնում նոր իրադրությունը։
Նրանք, ակներևորեն, կարծում են, թե բանվորական ուժի
դժվարությունները պատահական երևույթ են, թե բանվո-
րական ուժի պակասը կանհետանա ինքն իրեն, այսպես
ասած՝ ինքնահոսի կարգով։ Դա մոլորություն է, ընկեր-
նե՛ր։ Բանվորական ուժի դժվարություններն իրենք իրենց
չեն կարող անհետանալ։ Նրանք կարող են անհետանալ մի-
այն մեր սեփական ջանքերի հետևանքով։

Այսպես ուրեմն, կազմակերպված եղանակով հավաքա-
գրել բանվորական ուժը՝ կոլխոզների հետ պայմանագրեր
կնքելու կարգով, մեխանիզացիայի ենթարկել աշխատան-
քը, — այս է խնդիրը։

Այսպես է մեր արդյունաբերության զարգացման առա-
ջին նոր պայմանի հարցի բանը։

Անցնենք երկրորդ պայմանի հարցին։

II

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Ես հենց նոր խոսեցի մեր ձեռնարկությունների համար
կազմակերպված եղանակով բանվորներ հավաքագրելու
մասին։ Բայց հավաքագրել բանվորներ՝ դեռ չի նշանակում
ամբողջ դործը կատարել։ Մեր ձեռնարկությունները բան-
վորական ուժով ապահովելու համար անհրաժեշտ է հասնել
այն բանին, որ բանվորներն ամբողջին արտադրությանը,
և ձեռնարկության մեջ բանվորների կազմը քիչ թե շատ
մշտական դարձալի։ Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, որ
առանց արտադրության տեխնիկան քիչ թե շատ յուրաց-
րած ու նոր մեխանիզմներին ընտելացած բանվորների
մշտական կազմի, — անհնարին է առաջ շարժվել, անհնարին
է կատարել արտադրական պլանները։ Հակառակ դեպքում
հարկ կլինի յուրաքանչյուր անգամ բանվորներին նորից
սովորեցնել և ժամանակի կեսը ծախսել նրանց սովորեցնե-
լու վրա՝ փոխանակ արտադրության համար օգտագործելու
այն։ Իսկ իրականում այժմ ի՞նչ է տեղի ունենում մեղա-
նում։ Արդյոք կարելի՞ է ասել, թե մեղադրում բանվորների
կազմը ձեռնարկություններում քիչ թե շատ մշտական է։
Ո՛չ, ցավոք սրտի, այդ բանը չի կարելի ասել։ Ընդհակա-
ռակը, մեղանում մինչև այժմ էլ ձեռնարկություններում
դեռ կա բանվորական ուժի՝ այսպես կոչված հասունու-
թյուն։ Դեռ ավելին. մի շարք ձեռնարկություններում բան-
վորական ուժի հոսունությունը ո՛չ միայն չի անհետանում,
այլ, ընդհակառակը, աճում և ուժեղանում է։ Համենայն
դեպս, դուք քիչ ձեռնարկություններ կդառնեք, որտեղ կես
տարվա կամ նույնիսկ եռամսյակի ընթացքում բանվորնե-
րի կազմը չփոխվեր առնվազն 30—40 % -ով։

Առաջներում, արդյունաբերության վերականգնման ժա-

մանակաշրջանում, երբ տեխնիկական սարքավորումը մեզանում բարդ չէր, իսկ արտադրութեան մասշտաբները մեծ չէին, մի կերպ կարելի էր «հանդուրժել» բանվորական ուժի այսպես կոչված հոսունությունը: Այժմ՝ ուրիշ բան է: Այժմ իրադրությունն արժատապես փոխված է: Այժմ, ծավալուն վերակառուցման ժամանակաշրջանում, երբ արտադրության մասշտաբները վիթխարի են դարձել, իսկ տեխնիկական սարքավորումը՝ ծայր ստիճան բարդ, բանվորական ուժի հոսունությունը դարձել է արտադրության պատճառ, որ կաղմալուծում է մեր ձեռնարկությունները: Այժմ «հանդուրժել» բանվորական ուժի հոսունությունը նշանակում է քայքայել մեր արդյունաբերությունը, ոչնչացնել արտադրական պլանները կատարելու հնարավորությունը, ձախողել արտադրանքի որակը լավացնելու հնարավորությունը:

Ո՞րտեղ է բանվորական ուժի հոսունության պատճառը: Աշխատավարձի սխալ կաղմակերպման մեջ, տարիֆային սխալ սխտեմի մեջ, «ձախլիկային» հավասարեցման մեջ աշխատավարձի բնադավառում: Մի շարք ձեռնարկություններում տարիֆային դրույքները մեղանում այնպես են սահմանված, որ դրեթե անհետանում է տարբերությունը որակյալ աշխատանքի ու անորակ աշխատանքի, ծանր աշխատանքի ու թեթև աշխատանքի միջև: Հավասարեցումը տանում է դեպի այն, որ անորակ բանվորը շահադրույթած չէ որակյալների շարքն անցնելու և, այսպիսով, դուրի է առաջ շարժվելու հեռանկարից, որի պատճառով արտադրության մեջ նա իրեն «ամառանոցավոր» է դրում, որը միայն ժամանակավոր է աշխատում, որպեսզի մի քիչ «վաստակի» և հետո՝ դեռ մի որևէ ուրիշ տեղ «բախտ որոնելու»: Հավասարեցումը հասցնում է այն բանին, որ որակյալ բանվորը հարկադրված է ձեռնարկությունից ձեռնարկություն անցնելու, որպեսզի, վերջապես, մի այնպիսի ձեռնարկություն գտնի, որտեղ կարող են ինչպես հարկն է դնահատել որակյալ աշխատանքը:

Այստեղից էլ՝ «ընդհանրական» շարժումը ձեռնարկու-

թյունից ձեռնարկություն, բանվորական ուժի հոսունությունը:

Այս չարիքը ոչնչացնելու համար պետք է վերացնել հավասարեցումը և ջախջախել տարիֆային հին սխտեմը: Այս չարիքը ոչնչացնելու համար պետք է կաղմակերպել տարիֆների մի այնպիսի սխտեմ, որը հաշվի առներ որակյալ աշխատանքի ու անորակ աշխատանքի միջև, ծանր աշխատանքի ու թեթև աշխատանքի միջև եղած տարբերությունը: Չի կարելի հանդուրժել, որ սև մետաղագործության մեջ գլորողը նույնքան ստանա, ինչքան ավողն է ստանում: Չի կարելի հանդուրժել, որ երկաթուղային տրանսպորտում մեքենավարը նույնքան ստանա, որքան արտադրողն է ստանում: Մարքան ու Լենինն ասում են, որ որակյալ աշխատանքի ու անորակ աշխատանքի միջև եղած տարբերությունը գոյություն է ունենալու նույնիսկ սոցիալիզմի ժամանակ, նույնիսկ դասակարգերի ոչնչացումից հետո, որ միայն կոմունիզմի ժամանակ պետք է անհետանա այդ տարբերությունը, որ, այդ պատճառով, «աշխատավարձը» նույնիսկ սոցիալիզմի ժամանակ պետք է տրվի ըստ աշխատանքի, և ոչ թե ըստ պահանջմունքի: Բայց տնտեսավարների ու արհմիութենականների թվին պատկանող մեր հավասարիչները որս հետ համաձայն չեն և կարծում են, որ այդ տարբերությունն արդեն անհետացել է մեր սոցիալական հասարակարգում: Ո՞վ է իրավացին—Մարքսն ու Լենինը, թե՞ հավասարիչները: Պետք է կարծել, որ այստեղ իրավացին Մարքսն ու Լենինն են: Բայց սրանից հետևում է, որ ով այժմ տարիֆային սխտեմը կառուցում է հավասարեցման «սկզբունքների» վրա, առանց հաշվի առնելու որակյալ աշխատանքի ու անորակ աշխատանքի միջև եղած տարբերությունը, նա խզում է իր կապերը մարքսիզմի հետ, խզում է իր կապերը Լենինիզմի հետ:

Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղում, յուրաքանչյուր ձեռնարկության մեջ, յուրաքանչյուր ցեխում կան քիչ թե շատ որակյալ բանվորների առաջատար խմբեր, որոնց ամենից առաջ և գլխավորապես հարկավոր է ամրաց-

նել արտադրութեանը, եթե մենք իրոք որ ուզում ենք ձեռնարկութեան մեջ բանվորների մշտական կազմ ապահովել: Նրանք, բանվորների այդ առաջատար խմբերը, արտադրութեան հիմնական օղակն են կազմում: Նրանց ամրացնել ձեռնարկութեանը, ցեխին—նշանակում է ամրացնել բանվորների ամբողջ կազմը, արմատապես խախտել բանվորական ուժի հոսունությունը: Իսկ նրանց ինչպես ամրացնել ձեռնարկութեանը: Նրանց կարելի է ամրացնել՝ միմիայն նրանց դեպի վեր առաջ քաշելու միջոցով, նրանց աշխատավարձի մակարդակը բարձրացնելու միջոցով, աշխատավարձի այնպիսի կազմակերպման միջոցով, որը պատշաճ կերպով դնաճատում է աշխատավորի որակյալ լինելը: Իսկ ի՞նչ է նշանակում նրանց առաջ քաշել դեպի վեր և բարձրացնել նրանց աշխատավարձի մակարդակը: Մա, բացի այլ ամենից, նշանակում է հեռանկար բաց անել անորակ բանվորների համար և նրանց խթան տալ դեպի վեր առաջ շարժվելու համար, դեպի որակյալների կարգն առաջ շարժվելու համար: Դուք ինքներդ գիտեք, որ մեզ այժմ հարկավոր են հարյուրհազարավոր ու միլիոնավոր որակյալ բանվորներ: Բայց որակյալ բանվորներ ստեղծելու համար հարկավոր է խթան ու հեռանկար տալ չսովորած բանվորներին դեպի առաջ շարժվելու, դեպի վեր՝ առաջ քաշվելու համար: Եվ որքան համարձակորեն մենք բռնենք այս ուղին, այնքան ավելի լավ, որովհետև այս է բանվորական ուժի հոսունությունը վերացնելու հիմնական միջոցը: Իսկ խնայողություն անել այս դործում—նշանակում է ոճրադործություն կատարել, մեր սոցիալիստական ինդուստրիայի չահերին դեմ գնալ:

Բայց այս ամենը չէ:

Բանվորներին ձեռնարկութեան ամրացնելու համար անհրաժեշտ է նաև բանվորների մատակարարման ու բնակարանային պայմանների հետադա բարելավում: Ձի կարելի ժխտել, որ բնակարանային շինարարությունը ու բանվորների մատակարարման բնադառնում վերջին տարիներս քիչ բան չի արված: Բայց այն, ինչ արված է, ամենևին բավական չէ, որպեսզի ծածկենք բանվորների արագ աճող պահանջ-

մունքները: Ձի կարելի մատնանշել այն, որ առաջներում բնակարանների ավելի քիչ են եղել, քան այժմ, և որ, այս պատճառով, կարելի է հանդեսանալ ձեռք բերված հետևյալներով: Ձի կարելի նույնպես մատնանշել այն, որ առաջներում բանվորների մատակարարումն անհամեմատ ավելի վատ է եղել, քան այժմ, և որ, այս պատճառով, կարելի է բավականանալ դոյություն ունեցող դրությամբ: Միայն փոած ու ամբողջապես նեխված մարդիկ կարող են միխիթարվել՝ անցյալը մատնանշելով: Պետք է ելնել ո՛չ թե անցյալից, այլ բանվորների՝ ներկայումս աճող պահանջմունքներից: Պետք է հասկանալ, որ մեզանում բանվորների դոյության պայմաններն արմատապես փոխվել են: Բանվորն այժմ այն չէ, ինչ առաջ էր: Այժմյան բանվորը, մեր սովորական բանվորը, ուզում է ապրել՝ բավարարելով իր բոլոր նյութական ու կուլտուրական պահանջմունքները՝ թե՛ պարենային մատակարարման խմատով, թե՛ բնակարանների խմատով, թե՛ կուլտուրական ու ամեն տեսակի այլ պահանջմունքներն ապահովելու խմատով: Նա այդ բանի իրավունքն ունի, և մենք պարտավոր ենք ապահովել նրա համար այդ պայմանները: Ճշմարիտ է, նա մեղանում դործադրկությունից չի տառապում, նա ազատ է կապիտալիզմի լծից, նա այլևս ստրուկ չէ, այլ իր դործի տերն է: Բայց այս քիչ է: Նա պահանջում է իր բոլոր նյութական ու կուլտուրական պահանջմունքների ապահովումը, և մենք պարտավոր ենք նրա այդ պահանջը կատարել: Մի՛ մոռանաք, որ մենք ինքներս այժմ հանդես ենք դալիս բանվորին ուղղված որոշ պահանջներով, —նրանից պահանջում ենք՝ աշխատանքային կարգապահություն, լարված աշխատանք, մրցություն, հարվածալիություն: Մի՛ մոռանաք, որ բանվորների հսկայական մեծամասնությունը Սովետական իշխանություն այդ պահանջներն ընդունել է մեծ ողևորությունով և հերոսաբար կատարում է դրանք: Ուստի մի՛ զարմանաք, որ, իրագործելով Սովետական իշխանության պահանջները, բանվորներն իրենց հերթին կպահանջեն նրանից, որ նա կատարի իր պարտավորությունները՝ բանվորների

նյութական ու կոլտուրական դրութեան հետագա բարեկալ-
ման վերաբերմամբ:

Այսպէս ուրեմն, վերացնել բանվորական ուժի հոսու-
նութունը, ոչնչացնել հավասարեցումը, ունիւր կազմակեր-
պել աշխատավարձը, բարելավել բանվորների կենցաղային
պայմանները, — այս է խնդիրը:

Այսպէս է մեր արդիւնաբերութեան վարդապետները
կրողը նոր պայմանի հարցի բանը:

Անցնենք երրորդ պայմանի հարցին:

III

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ես վերը խոսեցի բանվորական ուժի հոսունութունը
վերացնելու անհրաժեշտութեան մասին, բանվորներին ձեռ-
նարկութուններին ամրացնելու մասին: Բայց բանվորներին
ամրացնելով ամբողջ դործը չի սպառնում: Հոսունութեան
ոչնչացմանը հասնելը քիչ է: Նաեւ հարկավոր է բանվորնե-
րին աշխատանքի այնպիսի պայմանների մեջ դնել, որոնք
ներանց հնարավորութիւն տալին արդիւնավետ աշխատելու,
բարձրացնելու արտադրողականութիւնը, լավացնելու ար-
տադրանքի որակը: Հարկավոր է, հետեւաբար, ձեռնարկու-
թիւններում աշխատանքն այնպէս կազմակերպել, որ ար-
տադրողականութիւնն ամսե-ամիս, եռամսյակից-եռամսյակ
բարձրանա:

Արդյոք կարելի՞ է ասել, որ աշխատանքի այժմյան
փաստական կազմակերպումը մեր ձեռնարկութիւններում
համապատասխանում է արտադրութեան արդիւնական պա-
հանջներին: Յաւոք սրտի, այդ չի կարելի ասել: Համենայն
դեպս, մենք զեռեւս ունենք մի շարք ձեռնարկութիւններ,
որտեղ աշխատանքի կազմակերպումը չափազանց վատ է
գրւած, որտեղ աշխատանքի մեջ կարգ ու կանոն և համա-
ձայնեցվածութիւն լինելու փոխարեն՝ տեղի ունեն անկար-
գութիւն ու խառնաշփոթութիւն, որտեղ փոխառակ դործի

պատասխանատւութեան՝ թաղալորում են լիակատար ան-
պատասխանատւութիւնն ու դիմագրկութիւնը:

Ի՞նչ բան է դիմագրկութիւնը: Դիմագրկութիւնը
հանձնարարված դործի ամեն մի պատասխանատւութեան
բացակայութիւնն է, մեխանիզմների, ստանդինների, գոր-
ծիքների համար ունենալիք պատասխանատւութեան բացա-
կայութիւնն է: Հասկանալի է, որ դիմագրկութեան պարա-
զայում խոսք անգամ չի կարող լինել աշխատանքի արտա-
դրողականութիւնը փոքրիշատե լրջորեն բարձրացնելու մա-
սին, արտադրանքի որակը լավացնելու մասին, մեխանիզմ-
ներին, ստանդիններին, դործիքներին հոգատար վերաբեր-
մունք ցույց տալու մասին: Դուք դիտեք, թե դիմագրկու-
թիւնն ինչ հետեւանքի հասցրեց երկաթուղային տրանսպոր-
տում: Նա նույնպիսի հետեւանքների է հասցնում նաեւ ար-
դիւնաբերութեան մեջ: Մենք ոչնչացրինք դիմագրկութիւ-
նը երկաթուղային տրանսպորտում և բարձրացրինք վերջինս
աշխատանքը: Մենք արդիւնաբերութեան մեջ էլ պետք է
նույն այդ բանն անենք, որպեսզի բարձրագույն աստիճանի
հասցնենք նրա աշխատանքը:

Առաջ էլի կարելի էր մի կերպ «յոյա գնալ» աշխատան-
քի այն սխալ կազմակերպմամբ, որը հարմարորեն կողք-
կողքի ապրում է դիմագրկութեան ու տվյալ կոնկրետ աշ-
խատանքի համար յուրաքանչյուրի ունենալիք պատասխա-
նատլութեան բացակայութեան հետ: Այժմ ուրիշ բան է:
Այժմ իրադրութիւնը բոլորովին այլ է: Արտադրութեան
ներկա վիթխարի մասշտաբների ու զիղանտ-ձեռնարկու-
թիւնների առկայութեան պայմաններում դիմագրկութիւնն
արդիւնաբերութեան համար մի-այնպիսի պատուհան է, որն
ապառնալիք է ստեղծում մեր բոլոր արտադրական ու կազ-
մակերպական նախաձեռնների համար ձեռնարկութիւններում:

Ի՞նչպէս կարող էր մեզ մոտ դիմագրկութիւնն արմա-
տանալ մի շարք ձեռնարկութիւններում: Նա ձեռնարկու-
թիւնները մտավ որպէս անընդհատի ապրիլի ուղեկից:
Սխալ կլինեք ասել, թե անընդհատ իր հետեւից անպատճառ
դիմագրկութիւն է բերում արտադրութիւն: Աշխատանքի

ճիշտ կազմակերպման պարագայում, որոշ աշխատանքի համար յուրաքանչյուրի ունեցած պատասխանատվություն ճիշտ կազմակերպման պարագայում, բանվորներին որոշ խմբեր մեխանիզմներին, ստանդիններին ամրացնելու առկայություն պարագայում, իրարից որակով ու որակավորմամբ հետ չմնացող հերթափոխերի ճիշտ կազմակերպման պարագայում, — այս պարագաներում անընդհատը տանում է դեպի աշխատանքի արտադրողականություն հսկայական աճում, աշխատանքի որակի լավացում, դիմադրելիության արմատահանում: Այսպես է բանը, օրինակ, երկաթուղային տրանսպորտում, որտեղ այժմ գոյություն ունի անընդհատը, բայց որտեղ դիմադրելիություն այլևս չկա: Արդյոք կարելի՞ է ասել, թե արդյունաբերության ձեռնարկություններում մենք ունենք անընդհատի նույնալիսի բարենպաստ պատկեր: Յալոթ սրտի, այդ չի կարելի ասել: Բանն այն է, որ մեզանում մի շարք ձեռնարկություններում չափազանց հապճեպ անցան անընդհատի՝ առանց համապատասխան պայմաններ նախապատրաստելու, առանց որակով ու որակավորմամբ շատ թե քիչ հավասարաբեռ հերթափոխերը պատշաճ կերպով կազմակերպելու, առանց՝ տվյալ կոնկրետ աշխատանքի համար յուրաքանչյուրի պատասխանատվությունը կազմակերպելու: Իսկ այս հասցրեց այն բանին, որ տարերքի կամ քիմիական անընդհատը վերածվեց դիմադրելիության: Սրա հետևանքով մի շարք ձեռնարկություններում մենք ունենք թղթե, խոտքով անընդհատ և ոչ-թղթե, իրական դիմադրելիություն: Սրա հետևանքով էլ՝ աշխատանքի պատասխանատվության զգացումի բացակայություն, անփութ վերաբերմունք դեպի մեխանիզմները, ստանդինների մասսայական ջարդոտում և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու խթանի բացակայություն: Ձուր չէ, որ բանվորներն ասում են՝ «աշխատանքի արտադրողականությունը մենք կբարձրացնեինք և գործը կլավացնեինք, բայց ո՞վ է մեզ գնահատելու, երբ ոչ ոք ոչ մի բանի համար պատասխանատու չէ»:

Սրանից հետևում է, որ մեր ընկերներից ոմանք տեղ-

տեղ չտալի են անընդհատը մոցնել և, չտալելով, խեղաթյուրել են անընդհատը՝ այն վերածելով դիմադրելիության: Այս դրությունը վերացնելու և դիմադրելիությունը ոչնչացնելու համար երկու ելք գոյություն ունի: Կամ անընդհատի կենսադրոծման պայմանները փոխել այնպես, որ անընդհատը չվերածվի դիմադրելիության՝ այն ձևով, ինչպես այդ արվեց երկաթուղային տրանսպորտի վերաբերմամբ: Կամ այնտեղ, որտեղ այժմ այդպիսի փոփոխություն համար նպաստավոր պայմաններ չկան, դեն չարտել թղթե անընդհատը, ժամանակավորապես անցնել 6-օրյա ընդհատի, ինչպես նորերու այդ արին Ստալինգրադի տրակտորագործարանում, և պայմաններ նախապատրաստել նրա համար, որ հետո վերադառնանք իրական, ոչ թե թղթե անընդհատի, վերադառնանք անդիմադրելի անընդհատի:

Ուրիշ ելք չկա:

Կասկած չի կարող լինել, որ այս ամենը բավականաչափ լավ են հասկանում մեր տնտեսավարները: Բայց նրանք լուրում են: Ինչո՞ւ: Ակնհայտորեն՝ այն պատճառով, որ վախենում են ճամբարությունից: Բայց երբևիցե՞ն է, որ բոլշևիկներն սկսել են վախենալ ճամբարությունից: Մի՞թե այս ճիշտ չէ, որ մի շարք ձեռնարկություններում անընդհատը դիմադրելիության է վերածվել, որ անընդհատն այսպիսով մինչև վերջին աստիճան խեղաթյուրվել է: Հարց է ծագում, ո՞ւմ է պետք այդպիսի անընդհատը: Ո՞վ սիրտ կանի ասելու, թե այդ թղթե ու խեղաթյուրված անընդհատը պահելու շահերն ավելի բարձր են աշխատանքի ճիշտ կազմակերպման շահերից, ավելի բարձր են աշխատանքի արտադրողականությունը զարգացման շահերից, ավելի բարձր են իրական անընդհատի շահերից, ավելի բարձր են մեր սոցիալիստական արդյունաբերության շահերից: Մի՞թե պարզ չէ, որ ինչքան ավելի շուտ թաղենք թղթե անընդհատը, այնքան ավելի շուտ կհասնենք իրական, ոչ-թղթե անընդհատի կազմակերպման:

Ընկերներէջ ոմանք կարծում են, թէ ղեմագրկությունը կարելի է ոչնչացնել նոյնքանքով, մեծախոստում ճառերով: Թա ղիտեմ, համենայն դեպս, մի շարք տնտեսավարներ, որոնք ղեմագրկության ղեմ մղած իրենց պայքարում սահմանափակվում են նրանով, որ ժողովներում հենց մի զուլի հանդես են գալիս ղեմագրկության հասցին ուղղած նոյնքանքով, երեւի կարծելով, թէ այդպիսի ճառերից հետո ղեմագրկությունն ինքն իրեն պետք է չքանա, այսպես ասած՝ ինքնահոսի կարգով: Նրանք խորին մոլորության մեջ են, եթե կարծում են, թէ ղեմագրկությունը պրակտիկայից կարելի է դուրս քշել ճառերով ու նոյնքանքով: Ո՛չ, ընկերներ, ղեմագրկությունն ինքն իրեն երբեք չի անհետանա: Այն կարող ենք ոչնչացնել և պետք է ոչնչացնենք միայն մենք ինքներս, որովհետեւ մենք ենք ձեզ հետ իշխանության զուլի կանգնած և մենք էլ ձեզ հետ պատասխանատու ենք ամեն ինչի համար, այդ թիւում նաեւ ղեմագրկության համար: Ես կարծում եմ, որ շատ ավելի լավ կլինեք, եթե մեր տնտեսական ղեկավարները, փոխանակ ճառերով ու նոյնքանքով զբաղվելու՝ մի-երկու ամիս նստելին, ասենք, հանձնարում կամ գործարանում, ուսումնասիրելին աշխատանքի կազմակերպման բոլոր դետալները և «մանրուքներ», իրականում ոչնչացնելին այնտեղ ղեմագրկությունը և ապա տվյալ ձեռնարկության փորձը տարածելին մյուս ձեռնարկությունների վրա: Ինչքա՞ն ավելի լավ կլինեք այս: Այս կլինեք իրական պայքար ընդդէմ ղեմագրկության, պայքար՝ աշխատանքի ճիշտ, բոլշևիկյան կազմակերպման համար, պայքար՝ ձեռնարկության մեջ ուժերը ճիշտ դասավորելու համար:

Այսպես ուրեմն, վերացնել ղեմագրկությունը, բարելավել աշխատանքի կազմակերպումը, միշտ դասավորել ուժերը ձեռնարկության մեջ, — այս է խնդիրը:

Այսպես է մեր արդյունաբերության զարգացման երրորդ նոր պայմանի հարցի բանը:

Անցնենք չորրորդ պայմանի հարցին:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Իրադրությունը փոխվել է նույնպես արդյունաբերության հրամանատարական կազմի նկատմամբ ընդհանրապես, ինժեներ-տեխնիկական անձնակազմի նկատմամբ մասնավորապես:

Առաջներում մեզանում բանն այնպես էր, որ մեր ամբողջ արդյունաբերության հիմնական աղբյուր էր ծառայում ուղիղափնական ածխամետաղադորձական բազան: Ուղիղափնային էր մետաղ մատակարարում մեր արդյունաբերական բոլոր շրջաններին, ինչպես Հարավին, այնպես էլ Մոսկվային ու Լենինգրադին: Նույնպես նա էր ածուխ մատակարարում մեր հիմնական ձեռնարկություններին ՍՍՌՄ-ում: Ես այստեղ բացառում եմ Ուրալը, որովհետեւ Դոնբասի համաձայնությամբ Ուրալի տեսակարար կշիռն աննշան մեծություն էր կազմում: Սրա համեմատ էլ մենք երեք հիմնական օջախ ունեինք արդյունաբերության հրամանատարական կազմ պատրաստելու համար. Հարավը, Մոսկվայի շրջանը, Լենինգրադի շրջանը: Հասկանալի է, որ իրերի նման դրության մեջ մենք այսպես թե այնպես կարողանում էինք յուրաքանչյուր ինժեներ-տեխնիկական ուժերի այն միջնորդով, որը միայն կարող էր իր տրամադրության տակ ունենալ մեր երկիրն այն ժամանակ:

Այսպես էր մոտիկ անցյալում:

Բայց մենք այժմ բոլորովին այլ իրադրություն ունենք: Հիմա, ես կարծում եմ, պարզ է, որ, պահելով զարգացման այժմյան տեմպերը և արտադրության վիթխարի մասշտաբները, մենք արդեն իսկ ձեռք կառավարվելու միախառն ուղիղափնական ածխամետաղադորձական բազայով: Դուք գիտեք, որ մեզ արդեն չեն բավականացնում ուղիղափնական ածուխն ու մետաղը՝ չնայած նրանց արտադրության աճմանը: Դուք գիտեք, որ մենք, այդ պատճառով, հարկադրված ենք ստեղծելու Արևելքում նոր ածխամետաղադոր-



ծախան բազա—Ուրալ-Վոլգրասը: Դուք զիտեք, որ այդ բա-
զան մենք առանց հաջողության է՛ք, որ ստեղծում ենք: Բայց
այդ քիչ է: Մենք, այնուհետև, պետք է մետաղադործու-
թյուն ստեղծենք բուն Սիբիրում՝ նրա աճող պահանջմունք-
ները բավարարելու համար: Եվ մենք այն արդեն ստեղ-
ծում ենք: Բացի զրանից, մենք պետք է ստեղծենք զուսա-
վոր մետաղադործության նոր բազա Ղազախստանում,
Թուրքեստանում: Վերջապես, մենք պետք է ծախարենք եր-
կաթուղային ամենալայնածախ շինարարություն: Այս են
թելադրում ամբողջությամբ վերցրած՝ ՍՍՌՄ-ի շահերը,—
ծայրամասային հանրապետությունները շահերը նույնպես,
ինչպես և կենտրոնի շահերը:

Բայց սրանից հետևում է, որ մենք արդեն չենք կարող
կառավարվել արդյունաբերության ինժեներ-տեխնիկական
ու հրամանատարական ուժերի այն միևնույնում, որով մենք
կառավարվել ենք առաջներում: Սրանից հետևում է, որ
ինժեներ-տեխնիկական ուժեր կազմակերպվելու հին օջախ-
ներն արդեն բավական չեն, որ անհրաժեշտ է ստեղծել նոր
օջախների մի ամբողջ ցանց—Ուրալում, Սիբիրում, Միջին
Ասիայում: Մենք այժմ մեզ պետք է արդյունաբերության
ինժեներ-տեխնիկական ու հրամանատարական ուժերով
եռապատիկ, հնգապատիկ ավելի ազատվենք, եթե խակա-
պես մենք մտադիր ենք իրադրվել ՍՍՌՄ-ի սոցիալիստա-
կան ինդուստրացման ծրագրերը:

Բայց մեզ ոչ ամեն տեսակի հրամանատարական ու ին-
ժեներ-տեխնիկական ուժեր են հարկավոր: Մեզ հարկավոր
են հրամանատարական ու ինժեներ-տեխնիկական այնպիսի
ուժեր, որոնք ընդունակ են հասկանալու մեր երկրի բան-
վոր դասակարգի քաղաքականությունը, ընդունակ են յու-
րացնելու այդ քաղաքականությունը և պատրաստ են խրդ-
մբտանքով իրադրվելու այն: Իսկ այս ի՞նչ է նշանակում:
Այս նշանակում է, որ մեր երկիրը մտել է զարգացման մի
այնպիսի փուլ, երբ բանվոր դասակարգը պետք է իրեն հա-
մար ստեղծի իր սեփական արտադրական-տեխնիկական ին-
տելիգենցիան, որն ընդունակ է պաշտպանելու նրա շահերն

արտադրության մեջ, որպես տիրապետող դասակարգի շա-
հեր:

Ոչ մի տիրապետող դասակարգ չի կառավարվել առանց
իր սեփական ինտելիգենցիան ունենալու: Ոչ մի հիմք չկա
կասկածելու այն մասին, որ ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգը
նույնպես չի կարող կառավարվել առանց իր սեփական ար-
տադրական-տեխնիկական ինտելիգենցիան ունենալու:

Սովետական իշխանությունը հաշվի է առել այդ հան-
գամանքը և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի
վերաբերյալ բարձրագույն ուսումնական հիմնարկների դրո-
ները բաց է արել բանվոր դասակարգի մարդկանց համար:
Դուք զիտեք, որ տասնյակ-հազարավոր բանվորա-դյուղա-
ցիական երիտասարդներ այժմ սովորում են բարձրագույն
ուսումնական հիմնարկներում: Եթե առաջներում, կապի-
տալիզմի օրով, բարձրագույն ուսումնական հիմնարկներն
աղաների զավակների մեռաչնորհ էին, ապա այժմ սովե-
տական հասարակակարգի ժամանակ, բանվորա-դյուղա-
ցիական երիտասարդությունն այնտեղ իշխող ուժ է կաղ-
մում: Կասկած չկա, որ մենք մեր ուսումնական հիմնարկ-
ներից չուտով կստանանք հազարավոր նոր տեխնիկներ ու
ինժեներներ, մեր արդյունաբերության նոր հրամանատար-
ներ:

Բայց սա գործի միայն մի կողմն է: Գործի մյուս կողմն
այն է, որ բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական
ինտելիգենցիան կազմվելու է ո'չ միայն բարձրագույն դպ-
րոցն ավարտած մարդկանցից,—այն պետք է հավաքագրվի
նաև մեր ձեռնարկությունների պրակտիկ աշխատողներից,
գործարանի, ֆաբրիկայի, հանքահորի որակյալ բանվորնե-
րից, բանվոր դասակարգի կուլտուրական ուժերից: Մրցու-
թյան նախաձեռնողները, հարվածային բրիգադների առաջ-
նորդները, աշխատանքային վերելքի պրակտիկ ներշնչողնե-
րը, շինարարության այս կամ այն ճախատամասերում աշ-
խատանքի կազմակերպիչները,—հա բանվոր դասակարգի
նոր միջնախավը, որը և բարձրագույն դպրոցն անցած ըն-
կերների հետ միասին պետք է կազմի բանվոր դասակարգի

ինտելիգենցիայի կորիզը, մեր արդյունաբերութեան հրամանատարական կազմի կորիզը: Խնդիրն այն է, որ այդ ձեռներեց ընկերներին ստվերի մեջ չպահենք, նրանց ավելի համարձակ առաջ քաշենք հրամանատարական պաշտոնների համար, նրանց հնարավորութունն տանք ցուցաբերելու իրենց կազմակերպչական ընդունակութունները, նրանց հնարավորութունն տանք լրացնելու իրենց զիտելիքները և ստեղծենք նրանց համար համապատասխան պայմաններ՝ այս նպատակով փող չխնայելով:

Այս ընկերներին մեջ քիչ անպարտիականներ չկան: Բայց այս չի կարող արդեւ ծառայել, որ ավելի համարձակ առաջ քաշենք նրանց ղեկավար պաշտոնների համար: Ընդհակառակը, հենց դրանց, այդ անպարտիական ընկերներին, հարկավոր է շրջապատել առանձին ուղադրութեամբ, հարկավոր է առաջ քաշել հրամանատարական պաշտոնների համար, որպեսզի նրանք իրականում համոզվեն, որ պարտիան կարողանում է գնահատել ընդունակ ու տաղանդավոր աշխատողներին: Ընկերներից ոմանք կարծում են, թե Փարբիկաներում, գործարաններում ղեկավար պաշտոնների համար կարելի է առաջ քաշել միայն պարտիական ընկերներին: Այս հիման վրա նրանք հաճախ ստվերի մեջ են պահում ընդունակ ու ձեռներեց անպարտիական ընկերներին՝ առաջին տեղն առաջ քաշելով պարտիականներին, թեև ավելի պակաս ընդունակ ու անձնակերպ: Ինչ ասել կուզի, որ այսպիսի, — թող ներվի սուս, — «քաղաքականութեան» ավելի հիմար ու ուսակցիոն բան չկա: Հաղիվ թե կարիք կա ապացուցելու, որ այսպիսի «քաղաքականութեամբ» կարելի է միայն վարկաբեկել պարտիային և հետ վանել պարտիայից անպարտիական բանվորներին: Մեր քաղաքականութեանը բնավ այն չէ, որ պարտիան մի փակ կաստա դարձնենք: Մեր քաղաքականութեանն այն է, որ պարտիական ու անպարտիական բանվորներին միջև գոյություն ունենա «փոխադարձ վստահութեան» մթնոլորտ, «փոխադարձ ստուգման» մթնոլորտ (կենիւ): Մեր պարտիան բանվոր դասա-

կարգի մեջ ուժեղ է, իմիջի այլոց, այն պատճառով, որ նա հենց այդպիսի քաղաքականութեան է կիրառում:

Այսպես, ուրեմն, հասնել այն բանին, որ ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան, — այս է խնդիրը:

Այսպես է մեր արդյունաբերութեան զարգացման չորրորդ նոր պայմանի հարցի բանը:

Անցնենք հինգերորդ պայմանի հարցին:

V

ՇՐՋԱՌԱՐՁԻ ՆՇԱՆՆԵՐ ՀԻՆ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՄԵՋ

Այլ կերպ է դրվում նույնպես հին, բուրժուական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը:

Մի-երկու տարի առաջ մեզանում բանն այնպես էր, որ տեխնիկական հին ինտելիգենցիայի ամենից ավելի որակյալ մասը վարակված էր վնասարարութեան հիվանդութեամբ: Դեռ ավելին. վնասարարութեանն այն ժամանակ մի-տեսակ մոդա էր: Ոմանք վնասում էին, մյուսները թաղցնում էին վնասարարներին, երրորդները ձեռքերն էին լվանում և չեզոքութուն էին պահպանում, չորրորդները տատանվում էին Սովետական իշխանութեան ու վնասարարների միջև: Իհարկե, տեխնիկական հին ինտելիգենցիայի մեծամասնութեանը չարունակում էր շատ թե քիչ լոյալ աշխատել: Բայց այստեղ խոսքը ո՛չ թե մեծամասնութեանը, այլ տեխնիկական ինտելիգենցիայի ամենից ավելի որակյալ մասին է վերաբերում:

Ի՞նչն էր վնասարարական չարում ստեղծողը, ի՞նչն էր այն սնողը: Դասակարգային պայքարի սրումը ՍՍՌՄ-ի ներսում, Սովետական իշխանութեան հարձակողական քաղաքականութեանը քաղաքի ու դյուղի կադիտալիստական էլեմենտների վերաբերմամբ, այս վերջինների դիմադրութեանը Սովետական իշխանութեան քաղաքականութեանը,

միջազգային դրուժյան բարդութիւնը, կոլխողային ու սովխողային շինարարութեան դժվարութիւնները: Եթե վնասարարների մարտական մասի ակտիվութիւնն ամբողջովն չի կապիտալիստական երկրների իմպերիալիստների ինտերվենցիոնիստական խաղերով և հացի հարցում եղած դժվարութիւններով երկրի ներքում, ապա տեխնիկական հին ինտելիգենցիայի մյուս մասի տատանումները դեպի ակտիվ վնասարարների կողմն ուժեղանում էին արոցկիստական մենչեիկյան շաղակրատների մոդայական զրույցներով այն մասին, թե՛ «կոլխողներից ու սովխողներից, միևնույն է, ոչինչ դուրս չի դա», «Սովետական իշխանութիւնը, միևնույն է, վերասերվում է և պետք է շուտով ընկնի», «բուլչեիկներն իրենց քաղաքականութեամբ իրենք են նպաստում ինտերվենցիային» և այլն և այլն: Բացի սրանից, եթե նույնիսկ հին բուլչեիկներից ոմանք, որ պատկանում էին աջ ուկրոնիստներին թվին, չգիմացան «համաճարակին» և այս ժամանակաշրջանում պարտիայից մի կողմ ծռվեցին, ապա հիմք չկա դարձնալու, որ բուլչեիկի հոտը երբեք չառած տեխնիկական հին ինտելիգենցիայի մի մասը նույնպես, աստուծու օգնութեամբ, տատանվեց:

Հասկանալի է, որ Սովետական իշխանութիւնն իրերի այս դրութեան ժամանակ կարող էր լուրջ մի միակ քաղաքականութիւն կիրառել տեխնիկական հին ինտելիգենցիայի վերաբերմամբ—ակտիվ վնասարարներին ջախջախելու, չեզոքներին շերտավորելու և լոյալներին գրավելու քաղաքականութիւն:

Այսպես էր մեկ-երկու տարի առաջ:

Արդյոք կարելի՞ է ասել, թե մենք այժմ ունենք ճիշտ նույնպիսի իրադրութիւն: Ո՛չ, այդ չի կարելի ասել: Ընդհակառակը, մեղանում այժմ ստեղծվել է բոլորովին այլ իրադրութիւն: Սկսեց հենց նրանից, որ ջախջախեցինք ու հաջողութեամբ հաղթահարում ենք քաղաքի ու գյուղի կապիտալիստական էլեմենտներին: Իհարկէ, հին ինտելիգենցիային սա չի կարող ուրախացնել: Շատ հավանական է, որ նրանք դեռևս ցավակցութիւն են հայտնում իրենց ջախ-

ջախջախեցնելին: Բայց չի պատահում, որ համակրողները, և առավել ևս չեզոքներն ու տատանվողները, հոժարակամ համաձայնեն իրենց ակտիվ բարեկամներին բախտակից լինելու այն բանից հետո, երբ այս վերջինները դաժան ու անուղղակի պարտութիւն կրեցին: Այնուհետև, մենք հաղթահարեցինք հացի հարցում եղած դժվարութիւնները, և ո՛չ միայն հաղթահարեցինք, այլև արտասահման ենք արտահանում այնպիսի քանակութեամբ հաց, որպիսին դեռ չէինք արտահանել Սովետական իշխանութեան գոյութեան ընթացքում: Ասել է՝ վերանում է տատանվողների նաև այս «վնասարարը»: Այնուհետև, այժմ կույրերն անդամ տեսնում են, որ կոլխողային ու սովխողային շինարարութեան ֆրոնտում մենք որոշակի հաղթեցինք՝ ձեռք բերելով մեծագույն հաջողութիւններ: Ասել է՝ հին ինտելիգենցիայի «դինամոցում» եղած ամենազլխալութ բանն անդունդն ընկավ: Ինչ վերաբերում է բուլժուական ինտելիգենցիայի ինտերվենցիոնիստական ակնկալութիւններին, ապա պետք է ընդունել, որ նրանք,—դժնե առայժմ,—աւազի վրա չինջած տնակ դուրս եկան: Իրոք որ, վեց տարի է ինտերվենցիա էին խոստանում և ոչ մի անգամ չփորձեցին ինտերվենցիա կատարել: Ժամանակ է ընդունելու, որ մեր բուլժուական խորաթափանց ինտելիգենցիային պարզապես քթից բռնած ման էին ածում: Էլ ես չեմ խոսում այն մասին, որ ակտիվ վնասարարների բուն վարքագիծը Մոսկվայի հայտնի դատավարութեան ժամանակ պետք է պոսիպովերդ աներ և իրոք պոսիպովերդ արեց վնասարարութեան իդեան:

Հասկանալի է, որ այս նոր հանդամանքները չէին կարող առանց ազդեցութեան մնալ մեր տեխնիկական հին ինտելիգենցիայի վրա: Նոր իրադրութիւնը տեխնիկական հին ինտելիգենցիայի մեջ պետք է ստեղծեր և իրոք ստեղծեց նոր տրամադրութիւններ: Սրանով էլ, իսկապես, բացատրվում է այն փաստը, որ մենք ունենք այս ինտելիգենցիայի՝ վնասարարներին առաջներում համակրող որոշ մասի դեպի Սովետական իշխանութիւնը կատարած շրջադարձի որոշակի նշաններ: Այն փաստը, որ ո՛չ միայն հին ինտելիգենցիայի

այս չերտը, այլև նույնիսկ երեկվա որոշակի վնասարարնե-
րը, երեկվա վնասարարների նշանակալի մասը մի շարք գոր-
ծարաններում ու ֆաբրիկաներում սկսում է աշխատել բան-
վոր-դասավարդի հետ միասեղ, — այս փաստն անտարակու-
սորեն խոսում է այն մասին, որ տեխնիկական հին ին-
տելիգենցիայի մեջ շրջադարձն արդեն սկսվել է: Այս, իհար-
կե, չի նշանակում, թե մեզանում վնասարարներ այլևս
չկան: Ոչ, չի նշանակում: Վնասարարներ կան և կլինեն,
քանի դեռ մեզանում դասավարդեր կան, քանի դեռ կա կա-
պիտալիստական շրջապատում: Բայց այս նշանակում է,
թե, քանի որ այսպես թե այնպես, տեխնիկական հին ին-
տելիգենցիայի՝ վնասարարներին առաջնորդում համակողմ
նշանակալի մասն աշխատում շրջադարձ է կատարել դեպի Սովե-
տական իշխանության կողմը, — ահա ի՞նչ վնասարարներ փոքր
քանակությամբ են մնացել, նրանք մեկուսացված են և
նրանք միառժամանակ պետք է խորին ընդհատակ քաշվեն:

Բայց սրանից հետևում է, որ սրան համապատասխան՝
մեր քաղաքականությունն էլ տեխնիկական հին ինտելիգեն-
ցիայի նկատմամբ պետք է փոխվի: Եթե վնասարարության
հոռուն շրջանում մեր վերաբերմունքը դեպի տեխնիկական
հին ինտելիգենցիան արտահայտվում էր գլխավորապես
ջախջախման քաղաքականությամբ, ապա այժմ, այդ ինտե-
լիգենցիայի՝ Սովետական իշխանության կողմը շրջադարձ
կատարելու ժամանակաշրջանում մեր վերաբերմունքը դեպի
նա պետք է արտահայտվի գլխավորապես նրան դրավելու և
նրա մասին հոգատարություն ունենալու քաղաքականու-
թյամբ: Սխալ և ոչ-դիալեկտիկական կլինե՞ր չարունակել
հին քաղաքականությունը նոր, փոխված պայմաններում:
Հիմարություն և անխոհեմություն կլինե՞ր հին դարձողի դրե-
թե ամեն մի մասնադեպի ու ինժեների դիտել որպես չքու-
նելված հանցադործի ու վնասարարի: «Մասնադիտակեբու-
թյունը» («спецедество») մեզանում միշտ համարվել է և
մնում է վնասակար ու ամոթալի երևույթ:

Այսպես, ուրեմն, փոխել վերաբերմունքը դեպի հին
դպրոցի ինժեներ-տեխնիկական ուժերը, նրանց վերաբեր-

մամբ ցուցաբերել ավելի մեծ ուշադրություն ու հոգատա-
րություն, նրանց ավելի համարձակ կերպով գրավել աշխա-
տանքի, — այս է խնդիրը:

Այսպես է մեր արդյունաբերության զարգացման հին-
գերորդ նոր պայմանի հարցի բանը:

Անցնենք վերջին պայմանի հարցին:

VI

ՏՆՏՀԱՇՎԱՐՎԻ ՄԱՍԻՆ

Պատկերը լրիվ չէր լինի, եթե ես չընտրեի ևս մի նոր
պայման: Խոսքն արդյունաբերության համար, ժողովրդա-
կան տնտեսության համար արվող կուտակման աղբյուրների
մասին է, այդ կուտակման տեմպերն ու ժեղացեղու մասին:

Կուտակման տեսակետից՝ ի՞նչն է նորը և առանձնահա-
տուկը մեր արդյունաբերության զարգացման մեջ: Այն, որ
կուտակման հին աղբյուրներն սկսում են արդեն չբավարար-
նանալ արդյունաբերության հետագա ծավալման համար:
Այն, որ ասել է թե, անհրաժեշտ է շոշափել և դոնել կու-
տակման նոր աղբյուրներ և ուժեղացնել հինը, եթե մենք
խսկապես ուզում ենք պահել ու զարգացնել ինդուստրացման
բուլճեիկյան տեմպերը:

Կապիտալիստական երկրները պատմությունից հայտնի
է, որ ոչ մի երկտասարդ պետություն, որը կամեցել է իր
ինդուստրիան ավելի բարձր աստիճանի հասցնել, չի կատա-
վարվել առանց դրսի օգնության՝ երկարաժամկետ վարկերի
կամ փոխառությունների ձևով: Ելնելով սրանից՝ արե-
մայան երկրների կապիտալիստներն իսպառ մեթոդներն մեր
երկրին վարկեր ու փոխառություններ տալ՝ կարծելով, թե
վարկերի ու փոխառությունների բացակայությունը հաս-
տատապես տակից կկտրի մեր երկրի ինդուստրացումը:
Բայց կապիտալիստները սխալվեցին: Նրանք հաշվի չառան
այն, Վոր մեր երկիրը, ի տարբերություն կապիտալիստա-
կան երկրներից, ունի կուտակման որոշ հատուկ աղբյուր-
ներ, որոնք բավական են, որպեսզի ինդուստրիան վերա-

կանգնենք ու ասիլի զարդացնենք: Եվ իրոք, մենք ո՛չ մի-
այն վերականգնեցի՞նք արդյունաբերությունը, ո՛չ միայն
վերականգնեցի՞նք դյուղատնտեսությունն ու տրանսպորտը,
այլև մենք կարողացանք արդեն ունենալ վրա զենեկ ծանր
արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի
վերակառուցման վիթխարի գործը: Հասկանալի է, որ այս
գործի վրա մեղանում տասնյակ-միլիարդավոր ռուբլիներ
են գնացել: Ո՞րտեղից են վերցվել այդ միլիարդները:
Թեթև արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից,
բյուջեական կուտակումներից: Այսպես էր ընթանում մե-
ղանում գործը մինչև վերջին ժամանակները:

Բոլորովին այլ կերպ է բանն այժմ: Եթե առաջ կու-
տակման հին աղբյուրները բավական էին արդյունաբերու-
թյան ու տրանսպորտի վերակառուցման համար, ապա
ներանք այժմ արդեն ակնհայտ կերպով սկսում են չբավա-
կանանալ: Այժմ բանն այն մասին է, որ վերակառուցենք
հին արդյունաբերությունը: Բանն Ուրալում, Սիբիրում,
Ղազախստանում նոր, տեխնիկապես սպառազինված արդյու-
նաբերություն ստեղծելն է: Բանը ՍՍՌՄ-ի հատիկային,
կենդանարուծական ու հումքային շրջաններում նոր խոշոր
գյուղատնտեսական արտադրություն ստեղծելն է: Բանը
ՍՍՌՄ-ի Արևելքի ու Արևմուտքի միջև երկաթուղային նոր
ցանց ստեղծելն է: Հասկանալի է, որ այս վիթխարի գործի
համար չեն կարող բավականանալ կուտակման հին աղբյուր-
ները:

Բայց այս ամենը է: Սրան հարկավոր է ավելացնել այն
հանգամանքը, որ, շնորհիվ գործն անտնտեսորեն վարելուն,
մեր մի ամբողջ շարք ձեռնարկություններում ու տնտեսա-
կան կազմակերպություններում տնտեսաշխարհի սկզբունք-
ները բոլորովին ձախողված դուրս եկան: Այս փաստ է, որ
մի շարք ձեռնարկություններում ու տնտեսական կազմա-
կերպություններում արդեն վաղուց է, որ դադարել են հաջ-
վելուց, կալիլուլացիա անելուց, եկամուտների ու ծախսերի
հիմնավորված հաշվեկշիռներ կադմելուց: Այս փաստ է, որ
մի շարք ձեռնարկություններում ու տնտեսական կազմակեր-

պություններում «խնայողության ուժով», «անարտադրո-
ղական ծախսերի կրճատում», «արտադրության ուցիտնա-
լացում» հասկացողությունները վաղուց արդեն մոռացից
լնկել են: Ակնհերձորեն, նրանք հույսերն այն բանի վրա են
դնում, թե Պետրանկը, «միևնույն է, մեզ կտա անհրաժեշտ
գումարները»: Այս փաստ է, որ վերջերս մի ամբողջ շարք
ձեռնարկություններում ինքնարժեքն սկսել է բարձրանալ:
Նրանց առաջադրանք է տրված ինքնարժեքը 10 և ավելի
տոկոսով իջեցնել, իսկ նրանք բարձրացնում են այն: Իսկ
ի՞նչ բան է ինքնարժեքի իջեցումը: Դուք գիտե՞ք, վոր ինք-
նարժեքի իջեցման յուրաքանչյուր տոկոսը նշանակում է
150—200 միլիոն ռուբլու կուտակումն արդյունաբերության
ներսում: Պարզ է, որ այս պայմաններում բարձրացնել ինք-
նարժեքը՝ նշանակում է արդյունաբերության ու ժողովրդ-
դական ամբողջ տնտեսության համար հարյուրավոր միլիոն
ռուբլիներ կորցնել:

Այս ամենից հետևում է, որ այլևս չի կարելի կառա-
վարվել միմիայն թեթև արդյունաբերությամբ, միմիայն
բյուջեական կուտակումներով, միմիայն գյուղատնտեսու-
թյունից ստացվող եկամուտներով: Թեթև արդյունաբերու-
թյունը կուտակման հարստադույն աղբյուր է, և նա այժմ
ունի է՛լ ավելի զարգանալու բոլոր շանսերը, բայց այս
աղբյուրն անսահման է: Գյուղատնտեսությունը կուտակ-
ման պակաս հարուստ աղբյուր է, բայց նա ինքն այժմ, իր
վերակառուցման շրջանում, կարող է պետության ֆինան-
սական օգնության: Ինչ վերաբերում է բյուջեական կու-
տակումներին, ապա ինքներդ գիտե՞ք, որ նրանք չեն կարող
և չպետք է անսահման լինեն: Էլ ի՞նչ է մնում: Մնում է
ծանր արդյունաբերությունը: Հետևաբար, պետք է հասնել
այն բանին, որ ծանր արդյունաբերությունը—և ամենից
առաջ նրա մեքենաշինական մասը—նույնպես կուտակումներ
տա: Հետևաբար, ուժեղացնելով ու ծավալելով կուտակման
հին աղբյուրները՝ պետք է հասնել այն բանին, որ ծանր
արդյունաբերությունը—և ամենից առաջ մեքենաշինու-
թյունը—նույնպես կուտակում տա:

Այս է ելքը:

Իսկ ի՞նչ է պահանջվում սրա համար: Անտնտեսության ոչնչացում, արդյունաբերության ներքին միջոցների մոլորելիլացիա, տնտեսաշխարհի արմատավորում և ամրացում մեր բոլոր ձեռնարկություններում, ինքնարժեքի սխառմատիկ իջեցում, ներարդյունաբերական կուտակման ուժեղացում՝ արդյունաբերության առանց բացառության բոլոր ձյուղերում:

Այս է դեպի ելքը տանող ուղին:

Այսպես ուրեմն, արմատավորել և ամրացնել տնտեսաշխարհը, բարձրացնել ներարդյունաբերական կուտակումը, — այս է խնդիրը:

VII

ՆՈՐ ԶԵՎՈՎ ԱՇԽԱՏԵԼ, ՆՈՐ ԶԵՎՈՎ ՂԵԿԱՎԱՐԵԼ

Սրանք են, ընկերներ՝, մեր արդյունաբերության դարդացման նոր պայմանները:

Այս նոր պայմանների նշանակությունն այն է, վոր նրանք արդյունաբերության համար ստեղծում են նոր իրադրություն, որը պահանջում է աշխատանքի նոր եղանակներ, դեկավարման նոր եղանակներ:

Ուրեմն:

ա) Այսպիսով, դուրս է դալիս, որ առաջվա նման այլևս չի կարելի հույս դնել բանվորական ուժի ինքնահոսի վրա: Արդյունաբերությունը բանվորական ուժով ապահովելու համար պետք է այդ ուժը կադմակերպված ձևով հավաքագրել, պետք է աշխատանքը մեխանիզացիայի ենթարկել: Կարծել, թե աշխատանքի մեր տեմպերի ու արտադրության մեր մասշտաբների պայմաններում կարելի է կառավարվել առանց մեխանիզացիայի՝ նշանակում է հույս ունենալ, թե ծովը կարելի է պարպել զգալով:

բ) Այնուհետև, դուրս է դալիս, որ չի կարելի այլևս հանդուրժել բանվորական ուժի հոսունություն արդյունաբերության մեջ: Որպեսզի այդ չարիքից ազատվենք, պետք

է աշխատավարձը նոր ձևով կադմակերպենք և բանվորների կադմը ձեռնարկություններում չատ թե քիչ մշտական դարձնենք:

գ) Ապա, դուրս է դալիս, որ այլևս չի կարելի հանդուրժել ղեմադրությունն արտադրության մեջ: Որպեսզի այդ չարիքից ազատվենք, պետք է նոր ձևով կադմակերպենք աշխատանքը, պետք է ուժերն այնպես դասավորենք, որ բանվորների յուրաքանչյուր խումբ պատասխանատու լինի աշխատանքի համար, մեխանիզմների համար, ստանդաների համար, աշխատանքի որակի համար:

դ) Ապա, դուրս է դալիս, որ այլևս անհնարին է առաջվա նման յուրազնալ հին ինժեներ-տեխնիկական ուժերի այն միևնույնում, որը մենք ժառանգել ենք բուրժուական Ռուսաստանից: Որպեսզի բարձրացնենք արտադրության ներկա տեմպերն ու մասշտաբները, պետք է հասնենք այն բանին, որ բանվոր դասակարգն իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելլեկտիան ունենա:

ե) Այնուհետև, դուրս է դալիս, որ չի կարելի առաջվա նման ի մի խառնել հին դավրոցի բոլոր մասնագետներին ու ինժեներ-տեխնիկական ուժերին: Փոխված իրադրությունը հալի առնելու համար պետք է փոխել մեր քաղաքականությունը և առավելագույն հոգատաբություն ցուցաբերել այն մասնագետների ու ինժեներ-տեխնիկական ուժերի նկատմամբ, որոնք որոշակի չըջաղարձ են կատարում բանվոր դասակարգի կողմը:

զ) Վերջապես, դուրս է դալիս, որ չի կարելի առաջվա նման կառավարվել կուտակման հին աղբյուրներով: Որպեսզի ապահովենք արդյունաբերության ու դյուղատնտեսությունը հետագա ծավալումը, պետք է հասնենք այն բանին, որ դործի մեջ դնենք կուտակման նոր աղբյուրներ, վերացնենք անտնտեսությունը, արմատավորենք տնտեսաշխարհը, իջեցնենք ինքնարժեքը և բարձրացնենք ներարդյունաբերական կուտակումը:

Սրանք են արդյունաբերության դարդացման նոր պայմանները, որոնք պահանջում են աշխատանքի նոր եղանակ-

ներ, տնտեսական շինարարութեան ղեկավարման նոր եղանակներ:

Ի՞նչ է պահանջվում նոր ձևով ղեկավարելը կարգի գցելու համար:

Դրա համար ամենից առաջ պահանջվում է, որ մեր տնտեսական ղեկավարները հասկանան նոր իրադրութիւնը, կոնկրետ կերպով ուսումնասիրեն արդյունաբերութեան դարձադասն նոր պայմանները և իրենց աշխատանքը վերակառուցեն նոր իրադրութեան պահանջները համեմատ:

Դրա համար, այնուհետև, պահանջվում է, որ մեր տնտեսական ղեկավարները ղեկավարեն ձեռնարկութիւնները ո՛չ թե «առհասարակ», ո՛չ թե «օղից», այլ կոնկրետ կերպով, առարկայորեն, որ նրանք յուրաքանչյուր հարցին մոտենան ո՛չ թե ընդհանուր չափակրատութեան տեսակետից, այլ խիստ գործարար կերպով, որ նրանք չբախտարարեն թղթե խուսադրութեամբ (отпиской) կամ ընդհանուր ֆրազներով ու լողունքներով, այլ թափանցեն գործի տեխնիկայի մեջ, խորամուկի լինեն գործի ղեկավարների մեջ, խորամուկի լինեն «մանրուքի» մեջ, որովհետև այժմ «մանրուքներից» մեծ գործեր են կառուցվում:

Դրա համար, այնուհետև, պահանջվում է, որ մեր այժմյան ծանրամեծ միավորումները, որոնք իրենց կազմում երբեմն ունենում են 100—200 ձեռնարկութիւն, անհապաղ ապակոշորացնեն ու միջանի միավորման բաժանեն: Հասկանալի է, որ այն միավորման նախագահը, որը գործ ունի հարյուր և ավելի թվով գործարանների հետ, ինչպես հարկըն է չի կարող ճանաչել այդ գործարանները, նրանց հնարավորութիւնները, նրանց աշխատանքը: Հասկանալի է, որ, գործարանները չճանաչելով, նա խիճակի չի լինի ղեկավարելու նրանք: Հետևաբար, որպեսզի միավորումների նախագահներին հնարավորութիւն տանք ինչպես հարկն է ուսումնասիրելու գործարանները և ղեկավարելու նրանք, պետք է նրանց բեռնաթափ անել գործարանների ավելցուկից, պետք է միավորումները բաժանել միջանի միավորումների և միավորումները մոտեցնել գործարաններին:

Դրա համար, այնուհետև, պահանջվում է, որ մեր միավորումները կոնկրետ կառավարումից անցնեն միանշյա կառավարման: Այժմ գործի վիճակն այնպես է, որ միավորումների կոնկրետներում նստած են 10—15-ական մարդ և թղթեր են գրում, դիտկուսիա են մղում: Ընկերների, այսպես կառավարել այլևս չի կարելի: Պետք է դադարեցնել թղթե «ղեկավարումը» և անցնել իրական, գործարար, բուլչեկիյան աշխատանքի: Թող միավորման գլուխ կանգնած մնա միավորման նախագահն ու միջանի տեղակալ: Այս միանշյալ բաժանումն կլինի միավորումը կառավարելու համար: Կոնկրետի մնացած անդամներին ավելի լավ կլինի ցած ինչեցնել գործարաններն ու ֆաբրիկաները: Այս անհամեմատ ավելի օգտակար կլինի թե՛ նրանց և թե՛ գործի համար:

Դրա համար, այնուհետև, պահանջվում է, որ միավորումների նախագահներն ու նրանց տեղակալներն ավելի հաճախ այցելեն գործարանները, աշխատելու համար ավելի երկար մնան այնտեղ, ավելի լավ ծանոթանան գործարանի աշխատողներին և ո՛չ միայն սովորեցնեն տեղական մարդկանց, այլև սովորեն նրանցից: Կարծել, թե այժմ կարելի է ղեկավարել ղեկանատնից՝ գրասենյակում նստած, գործարաններից հեռու, — նշանակում է մոլորութեան մեջ լինել: Գործարանները ղեկավարելու համար հարկավոր է ավելի հաճախ չլիքել ձեռնարկութիւնների աշխատողների հետ, պետք է նրանց հետ կենդանի կապ պահպանել:

Վերջապես, երկու խոսք 1931 թ. մեր արտադրական պլանի մասին: Գոյութիւն ունեն մեծագործական որոշ քաղցրեխներ, որոնք հավատացնում են, թե մեր արտադրական ծրագիրն անիրական է, անիրագործելի է: Սա Շչեդրիների «գերիմաստուն խարակածկները» նման մի բան է, որոնք միշտ պատրաստ են իրենց չուրջը «թերամոտութեան դատարկութիւն» տարածելու: Արդյոք իրական է մեր արտադրական ծրագիրը: Անպայման, այո՛: Նա իրական է թեկուզ այն պատճառով, որ մեղանում առկա են նրա իրագործման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Նա իրական է թե՛

կուզ այն պատճառով, որ նրա կատարումն այժմ կախված է բացառապես հենց մեզանից, մեր շնորհքից ու մեր ունեցած հարստագույն հնարավորություններն օգտադործելու մեր ցանկությունից: Էլ ուրիշ ինչո՞վ բացատրել այն փաստը, որ արդյունաբերության մի ամբողջ շարք ձեռնարկություններ ու ճյուղեր պլանն արդեն գերակատարել են: Հիմարություն կլինե՞ր կարծել, թե արտադրական պլանը հանգում է թվերի ու առաջադրանքների թվարկմանը: Իրականում արտադրական պլանը միլիոնավոր մարդկանց կենդանի ու պրակտիկ գործունեությունն է: Մեր արտադրական պլանի իրական լինելը՝ դա նոր կյանք ստեղծող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրագրի իրական լինելը՝ դա կենդանի մարդիկ են, այդ մենք ենք ձեզ հետ միասին, աշխատելու մեր կամքը, նոր ձևով աշխատելու մեր պատրաստակամությունը, պլանը կատարելու մեր վճռականությունը: Արդյոք մեզանում կա՞ այդ, հենց այդ իսկ վճռականությունը: Այո՛, կա: Հետևաբար, մեր արտադրական ծրագիրը կարող է իրագործվել և պետք է իրագործվի: (Երկարատև ծափահարություններ):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Բանվորական ուժը	4
II. Բանվորների աշխատավարձը	7
III. Աշխատանքի կազմակերպումը	12
IV. Բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի հարցը	17
V. Շրջադարձի նշաններ հին արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի մեջ	21
VI. Տնտեսաշարիկի մասին	25
VII. Նոր ձևով աշխատել, նոր ձևով ղեկավարել	28

Հայերեն թարգմանությունը խմբագրեցին՝ Ս. Ղեվոնդյան,
Օ. Հովհաննիսյան, Տ. Ալեքսանյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Ա. Մանուկյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Հրատարակչության № 833, պատվեր № 292

заказ № 292, տիրաժ 3000, тираж 3000

Հանձնվել է արտադրության 17/IX 1940 թ.

Ստորագրվել է տպագրելու 17/X 1940 թ.

Գինը 60 Կ. цена 60 Կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65

ՎՋ 2014

ՀՀ Ազգային գրադարան



NL0183054

9-15006044.

014

И. СТАЛИН

НОВАЯ ОБСТАНОВКА—НОВЫЕ
ЗАДАЧИ ХОЗЯЙСТВЕННОГО
СТРОИТЕЛЬСТВА

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940